Թամանեանը իր օգնականներով: Կուսակցութիւնները բաց էին թողել բոլշեւիկների դաւաճանութիւնը դատափետող և Միացեալ ու Անկախ Հայաստանի անկախութիւնը ջատագովող թռուցիկներ:

Հայաստանի զանազան կողմերից եկել էին բազմաթիւ պատգամաւորութիւններ: Ժողովրդական կուսակցութեան Կենտր. Կոմիտէն Թիֆլիսից Երեւան էր ուղարկել Սամ. Յարութիւնեանին և Լէօին՝ անկախութեան հանդիսաւորութիւններին ներկայ գտնուելու համար: Մասնակցում էր և Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

Արհեստակցական Միութիւնների Միութիւնը, դպրոցները, որբանոցները, անհաշիւ բազմութիւն գիւղերից ու քաղաքից՝ վաղ առաւօտեանից լեցրել էին փողոցները: Առաւօտեան հանրապետական մաղթանքից ու զօրահանդէսից յետոյ տեղի ունեցաւ զօրամասերի շքերթը. հետեւակ շարքերը, այրուձին, հրետանին՝ խլելով ներկաների ցնծագին ծափահարութիւնները: Ապա անցան արհեստակցական միութիւնները իրենց դրօշակներով ու նշաններով, բոյ-սկաուտները, աշակերտները, որբերը, գիւղացիական խմբերը: Մէջ ընդ մէջ շարժւում էին բեռնակիր ինքնաշարժներ զանազան խորհրդանշաններով, թրակտորներ, գիւղական սայլեր, գութաններ, կենդանի պատկերներ:

Մինչեւ ուշ գիշեր քաղաքը հրճուանքի մէջ էր: Երկոյեան՝ հրավառութիւն: Ցերեկը գիմնազիայի նոր շէնքի ընդարձակ և ճաշակով զարդարուած սրահում տեղի ունեցաւ հրապարակային ժողով-հանդէս, որին հրաւիրուած էին օտար պետութեանց ներկայացուցիչները, կառավարութեան և Խորհրդարանի անդամները, բարձր հրամանատարութիւնը, բազմաթիւ պատուիրակութիւններ ու պետական-հասարակական գործիչներ: Երեկոյեան նոյն սրահում կազմակերպուեց գրական-երաժշտական շքեղ երեկոյթ:

Փառահեղ հանդէսներ կատարուեցին և գաւառներում: Ալեքսանդրապոլում, բազմահազար ժողովուրդը, համքարութիւնները, կազմակերպուած բանւորութիւնն ու գիւղացիութիւնը մեծ խանդավառութեամբ տօնեց անկախութեան տարեդարձը: Քաղաքը ամբողջ զարդարուած էր եռագոյն դրօշակներով, գորգերով, կանաչով ու պատշաճ նշանաբաններով: Հսկայ թափօրը կայարանից, կտրելով քաղաքը, անցաւ կանգնեց քաղաքային ինքնավարութեան շէնքի առջեւ, ապա դիմեց դէպի նահանգապետարանը, Հ. Յ. Դաշնակցութեան ակումբը: Այստեղից շարժուեց Կազաչի Պոստ, ուր սպասում էր զինուորութիւնը: Այստեղ Գարեգին եպ.-ը կատարեց հանդիսաւոր մաղթանք, որից յետոյ տեղի ունեցան զօրահանդէս և բոյ-սկաուտական խաղեր: Թափօրի ժամանակ ընդհանուր ուշադրութեան և խանդավառ ծափերի առարկայ էր Մայր Հայաստանը խորհրդանշող ինքնաշարժը — Հայաստանը ներկայացնող մի օրիորդ, սուրը ձեռքին կանգնած, կողքին՝ հրացանաւոր հայդուկ, մէջտեղը՝ կռանը ձեռքին մի գարբին՝ սալի առջեւ գութանը կոփելիս: Մայր Հայաստանի յետեւից գնում էին գիւղացիներ՝ երեք լուծ եզով գութանը առջեւից, հոռովելի երգով: Ապա հետեւում էր